

Օգոստոսը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 օգոստոս

1680 Մահացավ Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը, որ Իսրայել Օրիի հետ մեկնեց Եվրոպա Հայոց ազատագրության համար օգնություն հայցելու քրիստոնյա աշխարհին:

1766 Սինեոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II-ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով:

1812 Կ. Պոլսում հրատարակվեց «Ղիտակ Բյուզանդյան» ամսաթերթը մինչև 1816 թ.-ի սեպտեմբեր:

1817 Թեոդոսիայում ծնվեց աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին:(Վախճ. 1900թ.-ին):

1862 Կ. Պոլսում տեղի է ունենում հայ աշխատավորության ցույցը, որի մասնակիցները սուլթանից պահանջում էին վավերացնել Ազգային սահմանադրությունը:

1894 Մասունի հերոսական ինքնապաշտպանությունը:

1896 Թուրքական կառավարությունը 500 քուրդ բերեց Կ. Պոլիս օգնելու իրագ ործելու հայկական ցեղասպանությունը:

1903 Ծնվեց հայ գրող Գուրգեն Մահարին:(Վախճ. 1969թ.-ին):

2 օգոստոս

1809 Կալկաթայում վախճանվեց հայ ազատագրական շարժման աչքի ընկնող ղեկավարներից մեկը՝ Հովսեփ Էմինը:(Ծնվ. 1726թ.-ին, Պարսկաստանի Համադան քաղաքում):

1862 Ձեյթունի հերոսական ապստամբությունը:

1914 Կնքվեց գերմանա-թուրքական համաձայնագիրը:

4 օգոստոս

1922 Թուրքմենստանի առաջին Հիսարյան հատուկ հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքունովի ծեղրով Չաղան Դըչլաղում ահաբեկվեց Էնվերը:

5 օգոստոս

1905 Ծնվեց հայ ավիոկոնստրուկտոր Արտեմ Սիկոյանը:(Վախճ. 1970թ.-ին):

6 օգոստոս

1843 Ադրիանապոլսում ծնվեց հայ գրող-երգիծաբան, լրագրող Հակոբ Պարոնյանը:(Վախճ. 1891թ.-ին):

8 օգոստոս

1905 Ծնվեց մեծամուն գրող Վախտանգ Անանյանը:(Վախճ. 1980թ.-ին):

1992 Ընկավ Կրասնոսելսկի շրջանի Արծվաշեն գյուղը:

10 օգոստոս

1897 Դաշնակցականները կազմակերպեցին «Խանասորի արշավանքը»:

1920 Սևր քաղաքում (Փարիզի մոտ) դաշնակիցների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև կնքվեց դաշնագիր, (որի 6-րդ հատվածի 88-91 հոդվածները վերաբերում են Հայաստանին) որը ճանաչեց Հայկական պետությունը և վավերացրեց արեգիդենտ Վիլսոնի գ ծած Արևմտյան Հայաստանի արևմտյան սահմանները, այնուամենայնիվ չլուծեց վիճելի հարցը:

11 օգոստոս

Նավասարդը հայոց հին տոմարի առաջին ամիսն է, կազմված է մավ (մոր) և սարդ (տարի) բառերից: Նավասարդ (օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-իր): Հին հայերի համար այս ամսվա 1-ը (օգոստոս 11-ը) եղել է ժողովրդական խրախճանքների տոն:

12 օգոստոս

1961 Ընդունվեց ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի որոշումը՝ «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ շուռ տալու միջոցառումների մասին»:

13 օգոստոս

1878 Սկսվեց Ձեյթունի ապստամբությունը:

14 օգոստոս

1887 Վախճանվեց հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը:(Ծնվ. 1834թ.-ին):

1896 Կ. Պոլսի Օսմանյան բանկի՝ «Բանկ Օտոմանի», գրավումը, որը տևեց 12 օր (մինչև օգոստոսի 26-ը):

15 օգոստոս

1878 Ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ Սիամանթոն: 1915թ. հայերի ցեղասպանության նախօրեին թուրքերը նրան կտանքների ենթարկելով սպանեցին:

1942 Երևանից ռազմածակատ մեկնեց 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան:

18 օգոստոս

1826 Հրդեհի զոհ գնաց Կ. Պոլսի Գում-գափու քաղամասում գտնվող հայոց մայր եկեղեցին, ոչնչացան նաև շատ արժեքավոր ձեռագրեր ու փաստաթղթեր:

1876 Ալեքսանդրապոլում ծնվեց հայ բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդիյանը:(Վախճ. 1927 թ.-ին):

1994 Երևանում վախճանվեց ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:(Ծնվ. 1908թ.-ին):

19 օգոստոս

1944 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Սերգեյ Խուդյակովին (Արմենակ ԽանՖերոյանց) ավիացիայի մարշալի կոչում շնորհելու մասին:

1991 Գորբաչովի դեմ պետական հեղաշրջում ձեռնարկվեց:

22 օգոստոս

1892 Նոր Նախիջևանում մահացավ հայ նշանավոր բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը:(Ծնվ. 1830թ.-ին):

1894 Կարսի մարզի Հաջիբեմը գյուղում ծնվեց նավատորմի ծովակալ Իվան Ստեփանի Իսակովը:(Վախճ. 1967թ.-ին):

1939 Ֆաշիստական զորքերի Լեհաստան ներխուժելու նախօրյակին Ա. Հիտլերը հայտարարեց. «Ո՞վ է ի վերջո, այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»:

1993 Հակահարձակման անցած ԼՂՀ Պաշտպանական բանակի հարվածների տակ ադրբեջանական ջախջախված զորքերը թողեցին Ֆիզուլի քաղաքը:

25 օգոստոս

1915 60000 հայերի ջարդը Տեր - Ջորիում Սահն Ձեքքիի գլխավորությամբ:

26 օգոստոս

1915 Թուրքերի կողմից կտանքների ենթարկվելով սպանվեց հայ բանաստեղծ, գրական հասարակական գործիչ Դանիել Վարուժանը:(Ծնվ. 1884թ.-ին):

1919 Սարիղամիշում հայկական բանակը պարտության մատնեց Մուստաֆա Բենալի զորքին:

1926 Անգարայի բանտում կախաղան բարձրացվեցին «Իթքիսատ» թուրքական քաղաքական կուսակցության պարագլուխներին և հայ ժողովրդի ջարդարարներին:

1945 Վախճանվեց ավստրիացի վիպասան Ֆրանց Վերֆելը: 1933 թ.-ին նա գրել է «Մուսա լեռան քառասուն օրը» ամենատարածված դյուցազնական պատմությունը՝ թուրքերի կողմից հայերի ցեղասպանության մասին:(Ծնվ. 1890թ.-ին):

27 օգոստոս

1870 Վախճանվեց մանկավարժ Հակոբ Մանվելյանը:(Ծնվ. 1802թ.-ին):

1896 Հայերի զանգ վածային կոտորածներ սկսվեցին Կ. Պոլսում: Տևեց երկու ամիս:

30 օգոստոս

1908 Թիֆլիսում վախճանվեց Սուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան): (Ծնվ. 1854թ.-ին):

1927 Մահացավ ազգային հերոս Ջորավար Անդրանիկը:(Ծնվ. 1865թ.-ին):

31 օգոստոս

1908 Ծնվեց հայազգի ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը՝ Կալիֆորնիայի Ֆոեզոն քաղաքում: Նրա սկզբնական ստեղծագործությունները հարազատ հայկական ընտանիքի և այն ժամանակվա անբարենպաստ պայմանների մասին են: Այդպիսի փորձ պատմվածքների հավաքածուներից նշանակալի են «Իմ անունը Արամ է» (1940) և «Սարոյանի կատակերգությունը» (1943): Սարոյանի շատ պիեսներ, քնարական կամ արձակ, ներառյալ «Իմ սիրտը լեռներում է», որը բուռն ծափահարվեց 1939թ.-ին և «Քո կյանքի ժամանակը», որի համար նա 1940թ.-ին ստացավ «Պուլտիզեր» մրցանակ: Սարոյանը մերժում էր պարզ կենտրոն այն աշխատանքների համար, որոնք իր կարծիքով ավելի գովաբանական չէին քան մյուսները:(Վախճ. 1981թ.-ին):

Լուրեր

Իրանահայ համայնք

- Լոյս է տեսել «Աւետիս» առողջապահական ամսաթերթի առաջին համարը

Տեղեկանում ենք, որ Թեհրանում Լոյս է տեսել «Աւետիս» առողջապահական ամսաթերթի առաջին համարը (Հունիս 2003 թ.), 1000 տպաքանակով:

Թերթի արտոնատերն է Լիդիա Ավանդյանը, իսկ խմբագիրը՝ Ալիս Խաչյանը:



Իրան

- ԱՄՆ-Ն ԱՆԴՐԿՈՎՎԱՍՈՒՄ Է. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ ԱՌԱՅԺԱՅ ԶԱՆԴՈՒԹՅՈՒՄ ԵՆ
- Իրանյան հարցը եւ Հայաստանի անվտանգությունը նույն մտարին

Եվրոպան իրաքյան պատերազմից դասեր քաղեց: Վերջինիս անսպասելի արագ ավարտը, ինչպես նաև այդ երկրի նախկին պաշարների բաշխման վրա ԱՄՆ-ի փաստացի վերահսկողության սահմանումը ապացուցեցին ծերացած աշխարհամասին, որ ոչ թե պետք է հակադրվել ԱՄՆ-ի նոր, կոշտ մերձավորասիական քաղաքականությանը, այլ դրանից առավելագույն շահ ապահովել: Դրանով է բացատրվում, որ եվրոպական այն երկրները, որոնք կտրականապես մերժեցին մաս կազմել հակաիրաքյան կռաւիցիային, այժմ Միացյալ Նահանգների հետ մերձեցման ակնհայտ քայլեր են ձեռնարկում:

Դրանից էլ հենց վախենում են Մերձավոր Արեւելքի այն երկրները, որոնք գտնվում են ԱՄՆ-ի «սեւ» ցուցակում: Հունիսի սկզբներից ակտիվորեն քննարկվեց այսպես կոչված իրանյան պրոբլեմը: Ըստ ամենայնի, այս «հիմնախնդիրը» ԱՄՆ-ը որոշել է լուծել սկզբունքորեն: Սակայն ինչպե՞ս հարցը վերջնական պատասխան չի գտնում հենց Վաշինգտոնում: Տիրապետում է երկու կարծիք. կամ իրանյան հարցը լուծվում է իրաքյան տարբերակով, կամ ուժեղացվում են Թեհրանի վրա ճնշումները, որոնց շնորհիվ ԱՄՆ-ը համոզվում է միջազգային հանրությանը ուժեղացնել սանկցիաները այդ երկրի նկատմամբ:

Բոլոր ղեկավարներն այլևս փաստ է, որ ԱՄՆ-ն իր լիակատար ներկայությունն է ապահովել տարածաշրջանում, որտեղ ուղղակիորեն շոշափվում են նաև Հայաստանի շահերը: Պաշտոնական Վաշինգտոնը ցանկություն էր հայտնել անդրկովկասյան երկու երկրներում Վրաստանում եւ Ադրբեջանում տեղակայել Գերմանիայից դուրս բերվող ամերիկյան զինվորական ստորբաժանումները: Դրանք Անդրկովկաս են բերվում իրանյան հիմնախնդրի սրվելու անմիջական ազդեցության տակ, չնայած այս երկրի նկատմամբ ռազմական գործողությունների մասին բարձրաձայն չեն համարձակվում խոսել անգամ Պենտագոնում: Այսուհանդերձ ակնհայտ է, որ նման պայմաններում Անդրկովկասում հենակետեր գտնելու ցանկությունը նշանակում է այս տարածաշրջանում երկարատեւ ներկայության ապահովման նախադրյալների ստեղծում:

Հետաքրքրական է սակայն, որ Ռուսաստանը այս կապակցությամբ անհանգստության նշաններ ցույց չի տալիս, չնայած Անդրկովկասը նրա ազդեցության անառարկելի ոլորտն էր համարվում: Ռուսաստանի այս տարօրինակ լռակյացության պատճառը թերեւս այն է, որ Մոսկվայում դեռևս չեն կողմնորոշվում ինչ դիրքորոշում որդեգրել: Բանն այն է, որ Ռուսաստանը վերջին շրջանում ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների հետ լայն համագործակցության եւ ինտեգրման քաղաքականություն է վարում: Նախագահ Պուտինի վերջին այցը Մեծ Բրիտանիա փորձագետները որակում են որպես այդ հարաբերությունների որակապես նոր մակարդակի ապահովում: Իսկ եվրոպական երկրները Միացյալ Նահանգների ճնշման տակ փաստացի ընդունեցին այն պարտադրվող տեսակետը, թե Իրանը խախտել է ատոմային զենքի տարածման պայմանագիրը:

Այսպես Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Սոհամնեդ էլ Բարադեյը, ինքն ընդունելով Իրանի կառավարության անսպասելի ընդդիմությունը երկրի տարածքում ատոմային կայաններում միջազգային փորձագետների հետազոտություններին, իր զեկույցում Թեհրանին մեղադրեց պայմանագրի կետերը խախտելու մեջ:

Մյուս կողմից Ռուսաստանը հատկապես պաշտպանության եւ ատոմային էներգետիկայի ոլորտում սերտորեն համագործակցում է Իրանի հետ: Բացի դրանից, Ռուսաստանը եւ Իրանը ունեն նաև ընդհանուր շահեր Կասպից ծովում եւ Անդրկովկասում, որոնք կարող են կասկածի տակ դրվել երկու երկրների հարաբերությունների վատացման դեպքում: Եվ դա այն պարագայում, երբ Իրանը Ռուսաստանից կոնկրետ սպասելիքներ ունի արդեն այս պահին:

Ամենայն հավանականությամբ այս տարվա սեպտեմբերին իրանյան հարցը սրությամբ կդրվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սեղանին: Համենայն դեպս Վաշինգտոնում ծրագրել են նման սցենար: Դրա հիմնական նպատակը կլինի հասնել ՄԱԿ-ի կողմից Իրանի նկատմամբ հավելյալ պատժամիջոցների կիրառման մասին որոշում կայացնելուն: Սակայն բոլորն էլ վստահ են, որ անգամ դրան հասնելն էլ Բուշի վարչակազմին չի կանգնեցնելու:

Այդ մասին վկայեցին Իրանում կատարված վերջին երադարձությունները: Բարեփոխական իրատասարդական ուժերը Թեհրանում ամսվա միջին հատվածներում կազմակերպեցին մի շարք հակակառավարական բովանդակությամբ ցույցեր՝ պահանջելով երկրում բարեփոխել մարդու իրավունքների պաշտպանությունը: Այս ակցիաները կատարվելու փորձեր են կատարում ժայռահեղ իսլամիստական ուժերը, տեղի են ունենում արյունալի բախումներ: Ոստիկանությունը ձերբակալություններ է իրականացնում երկու կողմերից էլ: Հետաքրքրականը սակայն Սպիտակ տան կեցվածքն էր այս անցքերի շուրջ: Վերջինիս տարածած հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «Մենք անհասկանալիորեն ենք ռեժիմի ուժերի կողմից ռուսանողների ձերբակալությունների եւ սադրանքների մասին տեղեկություններից եւ կոչ ենք անում ռեժիմին պաշտպանել մարդու իրավունքները եւ ազատ արձակել ձերբակալված ռուսանողներին»: Պաշտոնական Թեհրանը անմիջապես արձագանքում է դրան շեշտելով, որ հայտարարության հրապարակումը ուղղակի միջամտության փորձ է Իրանի ներքին խնդիրների: Իսկ անհ Թեհրանի համալսարանում Իրանի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին, որը բարեփոխումների ջանադավ է, ռուսանողներին կոչ է արել «չընկնել ամերիկացիների ծուղակի մեջ» եւ չվտանգել երկրի անվտանգությունը:

Անշուշտ դա ԱՄՆ-ի գինանոցի վերջին հնարավորությունը չէ Իրանում ներքին անկայունության հասնելու ճանապարհին: Միացյալ Նահանգների համար դժվար չէ Իրանում իրահրել նաև ազգամիջյան կոնֆլիկտներ: Եվ դրա համար նա կարող է օգտագործել Իրանի հյուսիսային շրջաններում բնակվող էթնիկ ադրբեջանցիների ինքնորոշման ձգտումները: Ադրբեջանում սիրում են անընդհատ կրկնել, որ այդ շրջանները այսպես կոչված Հարավային Ադրբեջանի տարածքներն են: Այս էթնիկ խմբավորումների ներսում ձեւավորվել են մեկնելու ազգայնական կազմակերպություններ, որոնցից հեղինակություն են վայելում հատկապես «Հարավային Ադրբեջանի ազգայինազատագրական շարժում» եւ «Ադրբեջանական միացյալ իսլամական ճակատ» կոչվող կառույցները: Հատկանշական է, որ այս տարվա հունվարին վերջինիս ղեկավար Մահմուդալի Չեխրեզանին այցելել է մի շարք եվրոպական երկրներ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա եւ այլն՝ ներկայացնելու Իրանում էթնիկ ադրբեջանցիների իրավունքների ոտնահարման դեպքերը:

Այս խմբավորումները, Ադրբեջանի հետ, ԱՄՆ-ի համար կարող են հեշտությամբ ստանձնել այն դերը, որը իրաքյան պատերազմի ժամանակ ընկած էր քրդերի վրա: Եթե պաշտոնական Բաքուն հստակ դիրքորոշվի ԱՄՆ զորակազմին իր տարածքում ընդունելու հարցում եւ դրական որոշում կայացնի, ապա կարող է պաշտպանված զգալ իրեն Իրանի հակաքայլերից

խրախուսելու համար Իրանի էքնիկ ադրբեջանցիների պահանջները եւ հետագա քայլերը:

Այս խնդրի սրումն անպայման կհանգեցնի Կասպիցի շուրջ մթնոլորտի հավելյալ շիկացմանը, որում կարող են ներքաշվել նաեւ Ռուսաստանը եւ Միջին Ասիայի երկու շահագրգիռ պետությունները: Հարեւան երկրների հետ հարաբերությունների փոփոխությունների գնալը ակնհայտ ռիսկ է Ադրբեջանի համար, որին անշուշտ հավելյալ երաշխիքներ պետք կզան իր անվտանգության ապահովման համար: Ադրբեջանը հույս ունի, որ այդ երաշխիքները կստանա ԱՄՆ-ից, դրանց շրջանակներում դիտարկելով նաեւ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի լիակատար աջակցությունը:

Իրապես սա անհանգստացնող սցենար է Հայաստանի համար: Եվ ԱՄՆ-ին, եւ Եվրոպական երկրներին Անդրկովկասը պետք է որպես էներգակիրների փոխադրման տարանցիկ ճանապարհ: Եվ որպեսզի այն գործի անվտանգ, անհրաժեշտ է, որ անդրկովկասյան երկրների միջեւ հակամարտությունները վերացվեն կամ լռեցվեն երկար ժամանակով: Եթե իրանյան հարցում Եվրոպան բոլոր խաղաղութեւրը հանձնի ԱՄՆ-ին որպես դոմինանտ ուժի, ապա չի բացառվում նաեւ, Ադրբեջանին տրվելիք երաշխիքների շրջանակներում, առնվազն ճնշումների նոր ալիք Հայաստանի վրա: Սրա համար ԱՄՆ-ն ունի «պահեստավորած զինամթերք», եթե նկատի ունենանք Սպիտակ տան կոշտ վերաբերմունքը Հայաստանի նախագահական ընտրությունների ժողովրդավարության չափանիշներին անհամապատասխանության վերաբերյալ: Հայաստանը կարող է մեղադրվել որպես ժողովրդավարությունից շեղվող պետություն իր բոլոր բացասական հետեւանքներով:

Բացի դրանից Իրանի նկատմամբ սանկցիաների կիրառումը, հետագայում, զուցե, ռազմական գործողությունների սկսումը կարգելակեն հայկիրանական տնտեսական համագործակցությունը, Հայաստանը վերջին հաշվով կարող է զրկվել արտաքին աշխարհի, մասնավորապես Մերձավոր Արեւելքի հետ հիմնական կապից: Իսկ սրանք իրապես ազգային անվտանգության խնդիրներ են:

Փաստորեն միակ խոչընդոտոր այս հարցերում կարող է հարուցել Եվրոպան եւ առաջին հերթին Մեծ Բրիտանիան, որ տնտեսական կարեւոր ներդրումներ, հետեւաբար շահ էլ ունի Իրանում: Եվրոպան պետք է գիտակցի, որ ԱՄՆ-ի ասիական քաղաքականությունը միայն մեկ նպատակ է հետապնդում. իր վերահսկողության տակ կենտրոնացնել դեպի Եվրոպա տանող բոլոր ուղիները: Եվ այս տեսակետից Եվրոպական կառույցների մշակած եւ տարածաշրջանի երկրներին ներկայացված տնտեսական ծրագրերը TRASECA, INOGATE եւ այլն, պարզապես կարող են հոսք գնդել եւ չաշխատել:

Ամբողջ խնդիրն այն է, որ տարածաշրջանում կատարվող տեղաշարժերը օբյեկտիվ իրողություններ են, որոնց Հայաստանը կարող է միայն հարմարվել եւ փորձել պահպանել իր դիրքերը նոր պայմաններում: Իսկ դրա համար անհրաժեշտ է առնվազն կանխատեսել բոլոր զարգացումները եւ համապատասխան քաղաքական կուրս մշակել:

ԳՈՐ ԱՐԲՂԱՅԱՅԱՆ

Հայաստան

• ՄԱՅԱՅԵԼ Է ԱՐՄԵՆ ԽՈՍԻԿՅԱՆԸ

Հայ թատրոնն ու կինոն ցավալի կորուստ կրեցին. 74 տարեկան հասակում մահացավ սիրված կատակերգակ դերասան Արմեն Խոստիկյանը: 1929 թ. Երեւանում ծնված դերասանը Սուրուկյանի մայր թատրոնի դերասանական կազմի անդամ էր դարձել 1951 թվականին, Երեւանի թատերական ինստիտուտը ավարտելուց անմիջապես հետո: Այնուհետեւ սկսվել էր նրա արտիստական բեղուն կյանքը, հետզհետեւ մարմնավորելով հայ եւ օտար դասական հեղինակների հերոսներին՝ Փիլո, Հարութ Անվերջ, Ֆերդինանդ, Ֆուլշե եւ ուրիշներ: Սիւսանյանի համդես է եկել մեծ ժողովրդականություն վայելող ֆիլմերում «Ռսկե ցիկլ», «Նվագախմբի տղաները» եւ ուրիշներ: Ամանորյա հեռուստածրագրերի ամենասիրված հերոսներից է եղել ավելի քան երկու տասնամյակ: 1987 թ. ստեղծել է թատերական «Փյունիկ» ստուդիան: 2000 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան

մեդալով, ի հավելումն նախապես ստացած Հայաստանի ժողովրդական արտիստի կոչմանն ու այլ պարգևների:

• ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԸ ԿՈՐՈՂ Է ԱՆԿՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՎԵԼ ԵՎՍ 14 ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊԵՏ: «Ներկայումս Հայաստանի ատոմակայանի անվտանգությունը համապատասխանում է գործող նորմերի, կանոնների պահանջներին»,- և այսպիսի գնահատական տվեց Հայաստանի ատոմայտեխնոլոգիայի տնօրեն Աշոտ Մարտիրոսյանը: Համաձայն այդ կանոնների, առաջին սերնդի տվյալ տիպի ատոմակայանների անվտանգությունը պետք է անընդհատ բարձրացվի: Նրա խոսքով, դեռ մինչև ատոմակայանի վերագործարկումը մշակված է ծրագիր, 1994թ-ից իրականացվում են անվտանգության բարձրացման միջոցառումներ, որոնք կշարունակվեն ամեն տարի՝ մինչև ատոմակայանի շահագործումից հանելը: Ա. Մարտիրոսյանը նշեց, որ ԱԷԿ-ի վերջնական կանգնեցման ժամկետը դեռևս անորոշ է:

Ռուսաստանի Վորոնիշ ատոմակայանի Յևկաթ բլոկները, որոնք նույն տիպի, նույն հզորության են ինչ ՀԱԷԿ-ը, արդեն աշխատել են իրենց նախագծային ռեսուրսը՝ 30 տարի, որից հետո Ռուսաստանի համապատասխան իրավասու մարմինները շահագործման ժամկետը երկարացրել են եւս 15 տարով: Մինչ այդ, ըստ Ա. Մարտիրոսյանի, նման փորձ կար նաեւ Ֆինլանդիայում: Ատոմայտեխնոլոգիայի տնօրենը հայտնեց, որ ՀԱԷԿ-ն աշխատել է 1980-1989թթ-ը եւ 1995թ-ից մինչև իմնա, այսինքն, ավելի քիչ, քան 16 տարի: «Համաձայն Հայաստանի ատոմակայանի նախագծային ռեսուրսի, այն կարող է անվտանգ շահագործվել եւս 14 տարի», սասց Ա.Մարտիրոսյանը:

Միջազգային

• «ԿԱՐՄՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՀԱՆՎԵՑ ՊԱՏԱԿԱՆ ԵՃՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԳՐՎԵՑ ԿՈՏՈՐԻԾԸ»

Այս վերնագրով թուրքական «Չաման» թերթը հուլիսի 2-ի համարում տեղեկացնում է, որ Կարսի Դերեջիբ գյուղում թուրքական պատմագիտական ընկերության եւ Կարսի նահանգապետարանի համատեղ ջանքերով հայերի սպանած 360 թուրքի զանգվածային գերեզմանոցում նախորդ օրն սկսած աշխատանքի շնորհիվ հայտնաբերվել են բազմաթիվ զանգեր եւ կմախքի այլ մասեր: Աճյունի մասերը պատանքել են նույն գերեզմանոցում թաղել են: «Չամանին» հայտնել են, որ այդ միջադեպի վայրում Եվրոպայի թուրքական միությունների կոնֆեդերացիան պատրաստվում է հուշարձան կառուցել:

Ըստ «Չամանի», զանգվածային գերեզմանոցի բացմանը ներկա են եղել թուրքական պատմագիտական ընկերության նախագահ դոկտոր, պրոֆ. Յուսուֆ Հալաչոլուի գլխավորությամբ բազմաթիվ հրավիրյալներ ինչպես թուրքիայից, այնպես էլ արտասահմանից: Գերեզմանոցը վերջիններիս վրա ծանր տպավորություն է գործել, եւ նրանք ասել են, որ համանման աշխատանքներն արժանի պատասխան են հայերին, որոնք իբր կոտորածի զոհ են դարձել եւ այդպես ներկայանում են: Գերեզմանոցի բացմանը ներկա է եղել նաեւ Գերմանիայից ժամանած ZDF հեռուստատեսությունը եւ նկարահանումներ է կատարել:

Ինչ վերաբերում է այսպես կոչված թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնի արդյունքը համդիսացող վերոհիշյալ գերեզմանոցի պեղումներին, ապա դրանք ընթացել են Վանի համալսարանի պրոֆ. Աբդուսետյան Ուլուչամի ղեկավարությամբ, որն էլ «Չամանին» ասել է, որ կմախքները մեծ մասամբ իրկիված էին, դրանց գերակշռող մասը կանանց եւ երեխաներին էր պատկանում, եւ գերեզմանոցում հայտնաբերվել են նաեւ թուրքական ուլունքներ, ականջօղի, այլ զարդեր:

Ուլուչամին լրացրել է Հալաչոլուն ասելով. «Առ այսօր պեղումներում 40 զանգ է հայտնաբերվել: Այս գերեզմանոցում թաղված է հայ ավազակների ոչնչացրած 360 թուրքի աճյունը: Մենք բացելով այս գերեզմանը, կոտորածը փաստագրեցինք, եւ դրան ակնառատ եղավ համաշխարհային ողջ հասարակական կարծիքը: Առաջիկա ամսում այստեղ հուշարձան ենք կառուցելու,

որպեսզի կատարենք մեր բարոյական պարտքը անմեղ զոհերի առջև»:

Օգտվելով առիթից, նշենք, որ թուրքական պատմագիտական ընկերության նախագահ Հալաչօղլուն քաղաքավարության տեսանկյունից և անտեսանելի բոլոր սահմաններն անցնելու գնով, այսպես կոչված թուրքերի գանգվածային զերեզմանոցի բացմանը հրավիրել էր Ցեղասպանության բանգարանի նստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանին և արժանի պատասխան էր ստացել: «Ազգը» հունիսի 26-ի համարում հրատարակեց Լ. Բարսեղյանի «Թուրք պատմագետների հերթական շրուն» խորագրով պատասխանը:

Հատկանշական է, որ Կարսում զերեզմանոցի Հայաստանի հետ մերձեցման թուրքական միտումներին զուգակցաբար բացումը հաջորդել է թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ելույթին: Թերեւս դրանով էլ բացահայտվել է այդ միտումների բուն էությունը:

3. 2.

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾԿԵՑ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն ամառային պարզ գիշեր էր դրսում: Նրանք հուզված, վրդովված, երկար թափառում են թիֆլիսի փողմններում...

-Պետրոս, այս իտնչ է տեղի ունենում...
-տխրությանը ատում է Արտաշեսը - մի հատիկ մարդ սպանող հանցավորին բռնում են, բանտարկում, դատում, կախաղան են բարձրացնում ի տես մարդկանց, որպեսզի մարդիկ զգուշանան, վախենան ու նման ոճի չզործեն... Իսկ այս ճիվաղը, հարյուր հազարավոր անմեղ երեխա ու կին սպանել տվող այս հազարապատիկ ոճրագործը ազատ ման է գալիս մարդկային հասարակության մեջ և դեռ պատվավոր հյուր էլ է համարվում... Նման ոճրագործներին ու մարդկեր գազաններին ոչ թե հյուրընկալելու էր բանվորաշուկայական երկրում, այլ կաշին պիտի հանվեր և աշխարհքով մեկ ման ածելով ցույց տրվելը մարդկանց, որպեսզի դաս լինել ցեղասպանության ախտակ ունեցող բոլոր արնածարավ պետական գործիչներին...

-Ե՛վ որպիսի~ վիրավորանք ու արհամարանք դեպի մեր անթիվ անհամար նահատակները,- շարունակում է արտաշեսը.- Ինչ է նշանակում այս բացառիկ բարեացական վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի դահձապետը... Ե՛վ ոչ միայն հայ ժողովրդի, այլև Արաբ, Թուրք աշխատավոր ժողովրդի ոխերին թշնամի, արիստոկրատ քարոզարար Ջեմալ փաշան...

- Դիվանագիտական խաղ... - իրեն հատուկ չարածճի հունդով պատասխանում է Պետրոսը - ավելի ճիշտը քաղաքական պոռնկություն... Չէտ որ դիվանագիտությունը համարվում էր յուրատեսակ պոռնկություն՝ ընդունակ ամեն տեսակ արդահատելի դերի...

-Այդ վերաբերվում է կապիտալիստական պետությունների դիպլոմատիային. մեր դիպլոմատիան ժողովրդական է, պարզ ու անսթեբեւթ, ուղղամիտ ու ուղղախոս, դասակարգային...

Ինչ էս կորցրել ինչ էս փնտրում... Դասակարգային~ն ... Մեր դիպլոմատների դասակարգային զգոնությունը այնքան բթացել է, որ նրանք առանց անաչելու թքեցին թուրքական կոմունիստների առաջնորդ Մուստաֆա Սուրիսու նվիրական հիշատակի վրա և նրան խեղդամահ անող դաժիճներին բարեկամական ձեռք մեկնեցին... Նույնիսկ ինձ պես հասարակ մահկանացուն պարզ է, որ Ջեմալիզմը պանթուրքական քարոզարար փաշաների, Թուրքիայի աշխատավոր մասսաների դաժանաբար շահագործող ու կեղծքող ֆեոդալների, զուցե ես խոշոր առետրականների դիկտատուրան է. իսկ մեր դիպլոմատները Ջեմալիզմը համարում են ոչ միայն ներկա Թուրքիայի, այլ ամբողջ մուսուլմանական աշխարհի հեղափոխության ռահվիրան... Իտնչ կասկած,

որ դրա համար նրանք ոչ մի լուրծ հիմք չունեն, բացի... Ջեմալի մի քանի խորամանկ, խաբեբա հայտարարություններից, որոնք ոչ մի գործնական քայլով չեն արդարացված... Նույնիսկ Ջեմալի մի ավաջբարա կոպիտ խաղը իր փաշա-մինիստրների կոմիսար կոչելը մեր դիպլոմատներին հմայել ու հիմարացրել է վերջնականապես... Արտաշես, լավ է չխորանանք... Ավետարանն ասում է, զորն ասեն ու զորը խոստովանեն...

- Քիթարորդ, այս ամենը դիվանագիտական խաղով կամ սխալներով բացատրելը հարցը շատ պարզեցնում է... Այս խնդրում գուցե մի այնպիսի հանգամանք կա, որ մեզ մտաչելի չէ...

- Դավաճանություն...- խոսքը կտրում է Պետրոսը:
- Չգիտեմ, չգիտեմ... Ես միայն այն գիտեմ, եւ հաստատ գիտեմ, որ այն քաղաքականությունը, որ այժմ տարվում է... Ջեմալական Թուրքիայի վերաբերմամբ սոցիալիստական երկրին խորթ է, օտար է, վայրենի է, անվայել է, այն չի բխում Հոկտեմբերյան Հեղափոխության էությունից...

- Այ դարբ այլ բարբ...

- Չէ որ - գայրութով շարունակում է Արտաշեսը - այդ նույն փաշաներն էին, որ դեռ սուլթանների և Իթթիհատի ժամանակ էլ զործում էին ու Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հարձակվեցին մանուկ խորհրդային իշխանության վրա և Կովկասյան հակահեղափոխական ուժերի գլուխ անցած արշավեցին Բաղուի Կոմունայի վրա և որոշել որ իրենց արյունաթաթախ թաթը հասավ՝ արյան մեծ լսեղդեցին այն ամենը, ինչ խորհրդային էր, ինչ թեկուզ հեռավոր կերպով հիշեցնում էր սոցնալիզմն ու հեղափոխությունը... Վերջապես Ջեմալի փաշաներն էին, որ դեռ մի տարի առաջ, նույնիսկ Մոսկովյան կոնֆերենցիայի օրերին ժամանակավորապես զրավված խորհրդային Ալեքսպոլում, Ռեկոմի եւ խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի աչքի առջև, առանց քաշվելու, ամնայն բարբարոսությամբ, ինչպես արել էին Համիտն ու Իթթիհատը, նախճիր սարքեցին ու ջարդեցին ավելի քան հարյուր հազար անմեղ ու անզեն աշխատավոր խորհրդային քաղաքացիներ, կանայք, ու երեխաներ... Ամբողջ երկիրը թալանեցին ու ավերեցին... Ինչպես այդ արյունակալ փաշաները կարող էին հեղափոխության ռահվիրա դառնալ կամ պրոլետարական պետության ու դաշնակից դառնալ. մեծ հանելուկ է... Այս խնդրում անշուշտ մի ահավոր գաղտնիք կա...

- Գաղտնիքն այն է, որ հայ ժողովուրդը ամենքից լքված, թույլ ու փոքր ժողովուրդ է, մեր երկիրն էլ ծայր աստիճան աղքատ ու անհեռանկար... Հետեւաբար մեզ ոչ ոք բանի տեղ չի դնում, մեզ հաշվի չի առնում, մեզ համար ոչ ոք չի ուզում թուրքերի հետ հարաբերությունները սրել ու գծովել, այդպես է այժմ վարվում նույնիսկ խորհրդային Պետությունը...

Սիւս գաղտնիքը, որը եւ մեր ժողովրդի բոլոր դժվարությունների մշտական գլխավոր աղբյուրն է հանդիսացել... Ինչ էս կարծում, եթե այդպես չլիներ, Ջեմալը ռիսկ կատներ գալ թիֆլիս ու ամբարտավանաբար թեֆ անել այստեղ...

- Ոչինչ, դրա համար թանգ կվճարի նա...

Այդ գիշեր, Ջեմալին պատահելուց հետո, երնասաարդ հայրենասերների հոգին մշտապես տանջող ցավը ավելի էր բորբորքվել... Նրանց ավելի զգալի էր դարձել հայրենիքի կորուստի ահավոր հատեւանքները, թուրքահայ աշխատավոր ժողովրդի թշվառ, անելանելի ու անհեռանկար վիճակը, նրա անտեր ու անպաշտպան լինելը...

Մրանք երկուսն էլ հեռվից դիտող, չեզոք հայրենասերներ չէին եղել: Նրանք ամենայն գիտակցությամբ ու անձնագիտությամբ իրենց ցախել կյանքը ի սպառ էին դրել բազմաչարչար ժողովրդի ազատագրման ու վերածննան վեճ գործին: Եղել էին ազնիվ, կարգապահ, քաջամարտիկ զինվորներ, խիզախաբար կռվելով առաջավոր դիցքերում ընդդեմ թուրքական հորդաների...

Օ՜, ինչպիսի դառ-վառ հույսերով էին տոգորված այն ժամանակ... Ինչպե՛ս գեղեցիկ, ազատ, դեմոկրատիկ, բարեշեն ու բարեկեցիկ էին պատկերացնում սուլթանական դարավոր լծից ազատագրված Հայաստանը...

Բայց այդ վառ հույսերը կամաց-կամաց նսեմացել ու 1920 թվականի շաշանը վերջնականապես խորհակվել էին Դաշնակցության խելահեզ, անհեռատես, անխոհեմ, ապիկար գործունեության հետեւանքով: Բայց հետո, Հայաստանի խորհրդայնացմամբ մի պահ «հույսի դռները նորից բացվել էին», մասնավաճ 1921 թվականի գարնանը, երբ Մոսկվայում տեղի էին ունենում հեխտության բանակցությունները Քենավաւկան թուրքիայի հետ:

Ինչպես Ռուսաստանում գտնվող բոլոր թուրքահայերը, Պետրոսն ու Արտաշեսն էլ ոգելորված էին այն օրերին ու մեծ սպասումներով իրենց հայրենադաճ հայացքը ուղղել էին դեպի Կարմիր Մայրաքաղաքը, հավատացած, որ հաղթանակած պրոլետարիատի դիպլոմային Հայ-թուրքական դարավոր վեճը կլուծի մեծ Լեհինի աշխարհով մեկ հռչակված սկզբունքների ոգով, այսինքն՝

**ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՏՑ ԱՆԵՎԱԿԱՅԻ ՈՒ
ՎԱՏՏԻԲՈՒՑԻԱՅԻ
ԲՈՒՐ ԾՆՇՎԱԾ ԱԶԳԵՐԻՆ ԻՆՔՆՈՐՈՇԱՆ ԼԻՎԱՍԱՐ
ԻՐԱՎՈՒՆՔ**
(Շար. 5)

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)
(12 եւ վերջ)

(Շար. Նախորդ համարից)

ԹԱՏՐՈՆ

Հայ թատերական կյանքն իրանում սկզբնավորվել է 1878-ին Թեհրանում («Ռուստա Պետրոս», «Երկու բաղջածներ»): 1879-ին մանկավարժ Մ.Փափագյանը կազմակերպել է Երկայացումներ իր տանը, ավելի ուշ՝ «Արամյան թատրոն»-ում (հիմնվել է 1915-ին): Խաղացել են իր հեղինակած «Արա զեղեցիկ», «Աշոտ ողորմած» եւ այլ պիեսներ: 1881-ին Թեհրանում, 1990-ին թավրիզում, հիմնադրվել է «Հայ թատերասիրաց ընկերություն», որի նպատակն էր օժանդակել թատերական գործին եւ ազգային դպրոցներին: Ներկայացումներ են կազմակերպել նաեւ Դավիդուն (1880) Նոր Ջուղայում «Թատերական ակումբ» (1886-1890), ինչպես եւ Ռաշտում, Անգալիում եւ այլուր: Տեղի թատերական կյանքի զարգացմանը մեծապես նպաստել են հյուրախաղերի եկած թատերախմբերն ու անհատ դերասանները, որոնց մի մասը երկարատեւ գործունեություն է ծավալել իրանի հայ թատրոնում: 1888-89-ին Թեհրանում եւ թավրիզում ելույթներ են ունեցել Սաֆրազյան ամուսինները, 1890-ական թթ. տարբեր քաղաքներում Փառանձենը, Ֆելեկյան թույրերը: 1910-ական թթ. լրագրող եւ թարգմանիչ Հ. Գարգաշը Թեհրանում հիմնադրել էր «թատերական ընկերություն», որի թատերասրահում բերադրվել են Պարոնյանի, Յուժին-Սուժբատովի եւ այլոց գործերը: Իրանի թատերական կյանքում մեծ իրադարձությունն էր Սիրանուշի (1912, 1919-21), Աբեյան Արմենյան (1909, 1913), Մայսուրյան-Չարիֆյան խմբերի (1911), Ոսկանյան ամուսինների (1913), Արմենյան, Կոստանյան ամուսինների (1918-24-ին), Հայաստանի առաջին պետթատրոնի (1924) եւ այլոց հյուրախաղերը: Իրանահայ թատրոնի զարգացման գործում մեծ ներդրում ունեն Ս.Թաշճյանը, Մ.Մարությանը, Գ.Իփեկյանը, Հ.Ստեփանյանը, Մանարյան ամուսինները, Տեղյան ամուսինները, Աթայան ամուսինները, Հայկ Գարգաշը եւ ուրիշներ: 1934-ին իրավիճակ է Վ.Փափագյանը (Օթելլոյի դերակատարումով): Թեհրանում գործել է Մ.Մարությանի ստեղծած թատերական ստուդիան (1934-37-ին, 1942-45-

ին), որը վերածվել է դրամատիկական թատրոնի, բեմադրվել են Շանթի, Շեքսպիրի, Պարոնյանի եւ այլոց ստեղծագործությունները: 1944-ից գործում է «Արարատ» հայ մշակութային կազմակերպությունը (ՀՄԱԿ, նախկինում՝ Հայ երիտասարդաց մշակութային միություն), որի թատերական բաժանմունքի (առաջին ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան) կազմակերպած ներկայացումները մեծ հաջողություն ունեն իրանում: 1939-46-ին Թավրիզի թատերախումբը (ղեկավարներ Ե.Բարոնյան եւ Ա.Հովհաննիսյան) բեմադրել է հայ եւ ռուս հեղինակների գործեր: 1944-ին կազմակերպվել է Թավրիզի թատերական կոմիտեն: Թատերական կյանքն աշխուժացել է նաեւ Աբադանում (կրթասիրաց միությունը կից գործել է թատերախումբ, ղեկ.՝ Ն.Շաղոյան) եւ Ուրմիայում: Թեհրանում հիմնադրվել են մի շարք թատերախմբեր՝ Հայ դրամատիկ դերասանախումբը (1944), Շանթ (1945) եւ Հայ պատանեկան մշակութային (1945) միությունները, Պատանի հանդիսատեսի թատրոն (1946 ղեկավար Ռ.Աթայան, Ն.Աղայան), «Սնոտուկյան» թատերախումբը (1947), Թեհրանահայ երիտասարդական արվեստասիրաց թատերախումբը (1951, ԹԵՄԹ), «Շահեն Սարգսյան» (1982) «Շերանիկ» (1982) եւ այլն:

1984-ին Թեհրանում կազմակերպվել է վերջին 50-ամյակի իրանահայ թատրոնի վեներանների մեծարման երեկո, փառատոներ, հրատարակվել դրամատիկ ստեղծագործություններ: Իրանահայ թատրոնի զարգացմանը մեծապես նպաստել են նաեւ՝ Մ.Հովհաննիսյանը, Ա.Ախրոնյանը, Ա.Աղամայանը, Հ.Ստեփանյանը, Մ.Դավթյանը, Մ.Մանուկյանը, Հ.Արմանը, Ս.Մացականյանը, Ա.Հովհաննիսյանը: Ա.Մելիք-Ազարյանը, Շ.Սարգսյանը, Լ.Բզնունին եւ ուրիշներ: 1980-ական թվականներին «Իրանահայ Ազգային մշակութային միություն» թատերախումբը ներկայացրեց մի քանի բեմադրումներ որոնք մինչեւ օրս էլ ժողովուրդը լավապես հիշում է դրանք («Ես ես տուն օճիչն», Հ.Հրանտ, բեմադրիչ Անդ.Խեչումյան, «Ռաֆայել Աղան Ամերիկայում» նույնը, «Ինչքան զարդեր կա շուրջ» Արամ Աշոտ Բաբայան, բեմադրիչ Անդ. Խեչումյան, նույնի «Գնա մեզի արի սիրեմ», «Հայկական հարսանիք», Արամ Աշոտ Բաբայան, բեմադրիչ Հայկազ Ստեփանյան, Շիրվանզադեի «Եվզինե», բեմադրիչ՝ Մարտիկ Գրիգորյան, եւ այլն): Դերերում էին Հայկազ Ստեփանյանը, Վիգեն Զաքարյանը, Գրիգոր Զաքիյանը, Վահիկ Վարդանյանը, Ադրինե Տալանը:

Հայ Մշակութային «Սիփան» Միության (հիմնադրվել է 1964-ին, Թեհրանում) թատերական բաժնի առաջին ղեկավարն էր Ա.ԹԱՇՋԱՆԻ (1964-66-ին): Նրա ղեկավարությամբ ներկայացվել են Ա.Աբեյանի «Մարվող ճրագներ», Շիրվանդազեի «Նամուս» եւ այլ պիեսներ: Միության թատերական գործունեությունը դադարել է 1966-ին: 1989-ին վերակազմվել է Ս.Մացականյանի ղեկավարությամբ, որի ջանքերով բեմադրվել են Շիրվանզադեի, «Շառլատան», «Երկու քաղցածներ», «Ալեյուրդը» (ըստ Դենիդյանի), «Սամվել» (ըստ Ռաֆայել) եւ այլն: Ներկայացումներին մասնակցել են Վ.Բաշյանը, Լ.Թաշճյանը, Հ.Շիրինյանը, Վ.Խոսրովյանը, Ա.Ասատրյանը, Լ.Խաչիկյանը, Վ.Մարգարյանը, Ս.Սատրեուսյանը, Մ.Օատրյանը, Վ.Օհանյանը, Գ.Բաղդունյանը եւ ուրիշներ: Միության թատերախումբն այժմ կոչվում է «Սկոտիչ Թաշճյան»: Գործում է նաեւ մանկապատանեկան թատերախումբ:

Իրանահայերը որոշակի դեր են խաղացել նաեւ իրանական թատրոնի զարգացման գործում: Իրանի դրամատուրգիայի հիմնախմբերն է հայազգի դիվանագետ եւ քաղաքական գործիչ Միրզա Մալքուն Խանը (գրել է կատակերգություններ): 1910-ին Թեհրանի պարուհի Ս.Օհանյանը բեմադրել է Գոգոլի «Ռեիփորդ» (պարսկերեն), որը մեծ արձագանք է ունեցել նաեւ Ռուսաստանում: Իրանի թատրոնում են գործել նաեւ Լ. Տեղյանները:

ԿՈՍԱՆՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ

Հիմնվել է 1922-ին, Թեհրանում: Խմբի հիմնական կազմում Միշա եւ Սարգո Կոստանյան ամուսիններն էին, որոնք տեղի սիրողների հետ կազմակերպել են մի շարք բեմադրություններ եւ շրջապալել իրանում: 1933-ին ստեղծվել են «Դրամատիկ դերասանական խումբ»-ը,

1935-ին «դրամա-օպերետային դերասանական խումբը»: Բեմադրել են բազմաթիվ պիեսներ, կատարելով զլխավոր դերերը: Խուսմբը գործել է մինչև 1950-ական թթ.:

Օգոստոսի հայկական տոները

Համադրեց Էդ. Գերմանիկ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ստեղծվել է 1979-ին Թեհրանում: Դեկավարել են Ալֆրեդ Դանիելյանը (1979-1980), Սուրեն Շահբազյանը (1980-1984), Անուշ Հովույանը (1984-ից): Բեմադրություններից են «Գիշորը», «Սպանված աղավնի», «Խաչագողներ», «Ավերակների վրա», «Օիրանի ծառ», ստեղծագործությունները, «Ուշ լինի, նուշ լինի», օպերետը եւ այլն: Հետագայում վերանվանվել է «Խայ ժողովրդական թատրոնի համագործակցության միավորում»:

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրվել է Թեհրանում 1881 թ., ակտիվ անդամներից էին Ս.Պետրոսյանը, Դ.Ղուկասյան, Ներսես Խանը, Հ. Մարտիրոսյանը, Հուսիկ Փափազյան, եւ ուրիշներ, որոնք համարվում էին թատրոնի հիմնադիրներ, մասնակցում էին նաեւ Հ.Սասեհյանը, Ավ.Ղարաբեգյանը եւ Հով.Թումանյանը. կազմալուծվում է 1916 թ.-ին: Ներկայացվել են «Շուշանիկ», «Արշակ երկրորդ», «Մեծն Ներսես», «Սեւ հողեր» եւ այլ ողբերգություններ եւ մի կատակերգություն:

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՏՈՒԴԻ

Ստեղծվել է «Թեհրանի Հայկազյան երկսեռ դպրոցի նախկին աշակերտներ» միությանը կից (ԹՀԵԴՆԱ) 1920-30-ական թթ. Արտո Տերյանի ղեկավարությամբ: 1930-37 թթ. ներկայացումներ են կազմակերպել «ԹՀԵԴՆԱ», Կոստանյան ամուսինները, Մանար ամուսինները, Վահրամ Փափազյանը եւ Ս.Թաշճյան:

ՇԱՀԵՆ ԱՐԳՍԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ

Ստեղծվել է 1982-ին, Թեհրանում՝ ռեժիսոր եւ թարգմանիչ Շ.Սարգսյանի հիշատակին: Բեմադրությունները են Շանթի «Հին Աստվածներ» (ռեժ. Ռ.Բուրդի), «Թղթախաղ» (ըստ Պարոնյանի, ռեժ. Հ.Եզանյան), «Առաջարկություն» (ռեժ. Ռ.Բուրդի), «Արջը» (երկուսն էլ ըստ Չեխովի, ռեժ. Ս.Սաֆարյան) եւ այլն: Թատերախմբում են Ա.Ազարյանը, Վ.Ազիզյանը, Ս.Միրաբեգյանը, Հ.Մուրադյանը, Վ.Սուրենյանը եւ ուրիշներ:

ՀԱՅ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ստեղծվել է 1989-ին, Թեհրանում Լ.Հովհաննիսյան-Աբրահամյանի ղեկավարությամբ: Թատրոնի ստեղծագործության հիմքը ինպրովիզացիան է: Ներկայացումների երաժշտությունը ստեղծվում է թատրոնում: Բեմադրություններից են «Մի խանգարեց, որ տեսնեն» (ըստ Շանթի եւ Վ.Շուշանյանի), Գ.Դարձիի «Սիավուշ եւ Սուղարբե», Իբսենի «Տիկնիկի տունը» եւ այլն: Թատրոնին կից գործում են դրամատիկական դասընթացներ: 1991-ին Հայ փորձնական թատրոնը երեւանում մասնակցել է սփյուռքահայ թատրոնների փառատոնին: Թատերախմբում են Ռ.Բաբախանյանը, Ս.Աբրահամյանը, Ժ.Սաղաթարյանը, Լ.Խանգալոյանը, Մ.Տեր Հովհաննիսյանը եւ ուրիշներ:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Նշանակելի է իրանահայ երաժիշտների ներդրումը հայ ազգային եւ իրանական ժողովրդական ու պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: Այն սկսել է զարգանալ դեռեւս 17-րդ դարում եւ ընդհուպ մինչեւ 20-րդ դ. այն գյուղային է ունեցել զուսանական երգի ձևով: Իրանի ժողովրդական երգարվեստի զարգացմանը XVIII դ. նպաստել են հայ աշուղներ Հարթուն Օղլին, Ամիր Օղլին, Դուլ Էգագո, Դուլ Արզունին, Բադեր Օղլին, Դուլ Սարգիս Շիրիշկանցին, Միսկին Մատթեուր, Ալլահվերդին, Մարտիրոս Մանուկյանը, Միսկին Ստեփանը եւ ուրիշներ:

(Շար. 12 եւ վերջ)

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ

Այս տոնն անմիջականորեն առնչվում է Ս. Աստվածածնի վերափոխման տոնի հետ: Այդ օրը օրհնվում է խաղողը, որից հետո թույլատրվում է ճաշակել պտուղը: «Օրհնեսցի պահպանեսցի» մաղթանքներով խաղողը բաժանվում է եկեղեցում գտնվող հավատացյալներին: Երգվում է «Փառք սուրբ խաչի» շարականը, որով դիմում են Աստծո ողորմածությանը եւ խնդրում, որպեսզի նվեր բերված խաղողը արժանի լինի ճաշակողներին, նրանց մեղքերին թողություն արվի, ինչպես նաեւ մտքով սթափ ու հոգով արի լինեն, չկորցնեն իրենց բանականությունը եւ չչեղվեն Աստծո ճանապարհից: Որոշ վայրերում խաղողօրհների արարողությունը կատարվում է այգիներում, եկեղեցու ավագ քահանան, ծախ ձեռքում Ս.Խաչը, իսկ աջում՝ մկրատը, թափորի ուղեկցությամբ եւ շարական երգելով, մտնում են խաղողի այգի: Կտրատում են նախօրոք պատրաստած լավ հասած ողկույզները եւ հենց այդտեղ էլ կատարվում է պտուղի օրհնության արարողությունը: Բերքի առատության վերաբերյալ բարեմաղթանքներից հետո, խաղողը բաժանում են ժողովրդին: Խաղողօրհները ուրախության, առատության տոն է, յուրաքանչյուր տան այգիներում, բացօթյա բացվում են առատ սեղաններ, որպես խմիչք օգտագործում են նախորդ տարվա բերքից բաշած տնական կարմիր գինին: Ընդունված կարգի համաձայն շինականը իր պտուղի առաջին բերքը, սիրով նվիրում է եկեղեցուն. ով ինչքան կարող է: Պատարագից հետո տաճարին նվիրաբերում են զանազան պտուղներ, խաղող, ցորեն, ալյուր, գինի, մեղր, ընտանի կենդանիներ եւ թռչուններ, բանջարեղեն եւ այլ մթերքներ: Եկեղեցու ավագ բերք այդ նվիրաբերություններն ընդունում է բարի մաղթանքներով, օրհնում է նրանց, իսկ վերջիններս հոգեկան բավարարության զգացումով են հեռանում եկեղեցուց, համոզվածով, որ Տերը այսուհետեւ բարի աչքով կնայի իրենց եւ առատ բերք կպարգևի: Նվիրատվություններից հետո բացվում է առատ ընդարձակ սեղան, միասնաբար ճաշում են եւ վայելում ուրախության ու տոնական ճոխ սեղանի բարիքներից:

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ, Գ. ՎԱՀՆՅԱՆ

76. Ինձ համար ծիծաղելի է, Հայաստանի հյուրերը այս ու վախ են անում՝ «Ախ, աստվածաշնչյան երկիր, վախ, աստվածաշնչյան երկիր»:

77. "Աստվածաշնչից" շատ առաջ են այնտեղ օրորոցային երգել եւ մետաղ ձուլել: Այո՛, այն մարդկանցից շատ առաջ, որոնց մասին հետագայում առասպելներ են հորինվել, այն առասպելներից ու լեգենդներից շատ առաջ, որոնք հետագայում դրվել են "Աստվածաշնչի" հիմքում, այդ ամենից շատ առաջ այնտեղ մարդիկ սիրել են ու տառապել, երեխաներ են մեծացրել, արհեստներ են զարգացրել: Ես վստահ չեմ, թե այդ մարդիկ տարբերվել են այժմյան մարդկանցից:

77-1. Հայերը ամենից ավելի սիրում են ծիծաղել իրենք իրենց վրա, իսկ դա հոգեւոր առողջության եւ առողջ երեւակայության վկայություն է:

Հայերը չեն վախենում տեսնելու իրենց թերությունները, չեն վախենում ցույց տալ դրանք աշխարհին: Սա եւս խոսում է ազգի ուժի մասին:

78. Դիտենք երկու շարք, մեկը մի քանի հազարամյակների, մյուսը՝ մի քանի տասնամյակների պատմությամբ:

Պատկերացրեք մի ժողովուրդ, որը դիմացել է հազարավոր պատերազմների եւ, ի վերջո, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ ենթարկվել ցեղասպանության, իսկ դրանից մի քանի տարի անց սովի, խլոցերի, տիրապետողների ծախսով քանակության հետեւանքով կորցրել են մի քանի հարյուր հազար զավակներ ու դուստրեր:

Երկիր, որտեղ դարեդար ստեղծվել են մարդկային արվեստի գլուխգործոցներ, հետո անխուսափելիորեն ոչնչացվել, եւ գործը հասել է նրան, որ 20-րդ դարի սկզբին ընդամենը չորս խոզուկ քաղաք ուներ կավածեփ տակներով:

Այո՛, պատկերացնենք այս ամենը եւ Հայաստանի ու նրա մի ժողովրդի թռչնության, տկարության, ֆիզիկական զրեթ լրիվ ոչնչացման մյուս նշանները...

Այնուհետեւ թույլ տվեք, որ մեր մտովի հայացքի կողքով անկատ անցնեն էլի մի քանի տարիներ: Եվ նորից բացենք աչքերս: Մենք կտեսնենք մի երկիր, որը հաշվված տարիների ընացքում կառուցել է ժամանակակից հիսուս քաղաք եւ քաղաքատիպ ավան:

Երկիր, որը մի քանի տասնամյակների ընթացքում տվել է Վիկտոր Համբարձումյան, Մարտիրոս Մարյան, Արամ Խաչատրյան, Ալեքսանդր Թամանյան եւ այլ կորիֆեյներ, տվել է ամենաբարձր աստիճանի ակնաավոր գորահրամանատարներ՝ Հովհաննես Բաղդամյան եւ Հովհաննես Իսակով, Արմենակ Խուրյակով եւ Համազասպ Բաբաջանյան: Այս էր ասելիքս:

79. Թող օրինյալ լինեն այն բոլոր-բոլոր հայերը, ովքեր ինձ օգնեցին ճանաչել իրենց երկիրը, սիրել նրա հողը, ջուրն ու երկինքը:

Եվ թող օրինյալ լինի հայկական քարը, որից սկսվեց Հայաստանի բնակիչների հոգսերի ու խիստախոնների հետ ինձ ծանոթությունը...

ՈՒՍԻՆ ՀՎՔԻՍՈՎ Թաթար գող

Մտվետական գրականություն՝ ամսագիր, երեւան, 1980, թիվ 11, էջ 57-82

80. Ճակատագիրը հայերին դրել է դժվար մի տարածքի վրա: Հնուց մինչեւ մեր օրերը շատերը փորձեցին խժռել նրանց եւ շատ անգամ խժռեցին, բայց բազմաթիվ շնորհներով օժտված այս արթուն ցեղը կարողացավ վեպարել: Բազում վտանգների դիմադրելիս, իրենց կրած տառապանքներով, իրենց մի ժողովրդին բնորոշ բնածին ազնվությամբ, իրենց աշխույժ հոգեկանով եւ բազմաթիվ գործնական ունակություններով ստեղծեցին գեղեցիկ մի քաղաքակրթություն եւ այդ ամենով, իրենց տառապանքով ու գործերով պահպանեցին իրենց գույնը մյուս ժողովուրդների մեջ եւ ամեն անգամ շահեցին մեր համակրանքը: Այդ երկրի որ մասին էլ դիպելու լինես, այնտեղից հուզիչ պատմություններ կցայտեն:

Վարդան Այգեկցի

6. Առյուծը եւ աղվեսը

Մի առյուծ կորյուն ծնեց, եւ հավաքվեցին կենդանիները կորյունին տեսնելու եւ ուրախանալու:

Աղվեսն եկավ եւ հանդեսի ժամանակ, բազմության, մեջ առյուծին նախատեց բարձրաձայն եւ անարգեց, թե ա՛յդ է քո գորոթությունը, որ ծնուն ես միայն մի կորյուն եւ ոչ բազմաթիվ:

Առյուծը հանդարտաբար պատասխանեց եւ ասաց. -Այո, ես ծնուն եմ մի կորյուն, բայց առյուծ եմ ծնուն եւ ոչ քեզ նման աղվես:

7. Իմաստուն դատավորը

Մի մարդ ուներ չար կին, եւ կինը կռվեց նրա հետ եւ ասաց.

-Վարձում ես, թե քո երեք որդիները քեզմի՞ց են: Սեկն է քեզմից, իսկ երկուսը՝ բիճ են:

Եւ նա հարցրեց, թե որ՞ն է ինը եւ կինը չասաց: Եւ երբ հայրը մեռնում էր, ասաց.

-Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն:

Եւ եղբայրները կռվում էին իրար հետ, մեկն ասում էր, ես եմ հարազատ որդին եւ մյուսը՝ թե ես եմ: Եւ գնացին մի իմաստուն դատավորի մոտ: Եւ դատավորը հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից եւ նետ արձակել նրա վրայ: Ով հորը խփեց նետով, եւ նետը ծակեր հոր մարմինը, նա էր հարազատ որդին:

Եւ երկու որդիները խփեցին հորը, իսկ ճշմարիտ որդին դանակը քաշեց, որ սպանի եղբայրներին եւ լաց եղավ դառն արտասուքով եւ թաղեց հոր մարմինը:

Եւ իմացան, որ նա էր հարազատ որդին եւ նրան տվեցին հայրենի կայքը:

8. Առյուծը, գայլը եւ աղվեսը

Առյուծը, գայլը եւ աղվեսը եղան եւ որսի ելան եւ գտան մի խոյ, մի ոչխար, որ է մաքի, եւ մի գառ: Ծաշի ժամին առյուծը ասաց գայլին բաժանիր մեր մեջ այդ որսը:

Եւ գայլն ասաց. -Ո՛վ թագավոր, աստված արդեն բաժանել է խոյը քեզ, մաքին ինձ եւ գառն աղվեսին:

Եւ առյուծը բարկանալով, ապտակ ցարկեց գայլի ծնոտին, եւ դուրս թռան գայլի աչքերը, եւ նստեց եւ դառն լաց եղավ:

Եւ դարձյալ ասաց առյուծն աղվեսին. բաժանիր ոչխարները մեր մեջ:

Եւ աղվեսը ասաց. -Ո՛վ թագավոր, աստված արդեն բաժանել է խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին եւ գառը քեզ ընթրիքին:

Եւ առյուծն ասաց. -Ո՛վ խարամակն աղվես, քեզ ո՞վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել:

Եւ աղվեսը ասաց. -Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան:

9. Միամիտ գողերը

Երկու գող բարձրացան մի մեծատան կտուրը եւ կամեցան երդով վայր իջնել եւ գողություն անել: Եւ լուսնկա էր: Եւ մեծատուն մարդն իմացավ, որ գողերը երդիկի մոտ են: Եւ կինը մարդուն ասաց, թե. -Այս ամեն գանձերը եւ ոսկին եւ կերպասը քեզ որտեղի՞ց են:

Եւ մեծատուն մարդն ասաց. -Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երդիկով իջնում էի, եւ լուսնկա էր, ինչպես այժմ, եւ լուսնի շողերը երգիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ, եւ ես գրկում էի շողերի սյունը եւ վայր էի իջնում եւ այնպիսի մի բան էի ասում, որ ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը. երեւում էր ինձ եւ կապում էի լուսնի շողերին եւ վեր բարձրանում: Եւ այս ամեն այդպես եմ վաստակել:

Երբ գողերն բանը լսեցին, խիստ ուրախացան եւ հավատացին այդ ցնորամիտ խոսքին եւ, լուսնի շողերը գրկելով, երդիկից վայր ընկան եւ ջարդեցին:

10. Եղեգնը եւ ծառերը

Մի թագավոր զբոսանքի ելավ շրջելու լեռներում եւ հովիտներում: Եւ տեսավ, որ մեծամեծ ծառեր կային կոտորված եւ փշրված, եւ միայն մի եղեգ կար կանգուն, անարատ: Եւ թագավորն ասաց.

-Ո՛վ եղեգ, ասա ինձ, թե ինչպես հաստուն ես մնացել, երբ մեծամեծ ծառերը փշրվել են:

Եւ եղեգն ասաց. -Ո՛վ թագավոր, երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ կանգնեցին հողմի դեմ, եւ հողմը նրանց փշրեց, իսկ ես խոնարհվեցի հողմի կանքով եւ ահա կանգուն եմ:

Առածանի

ԸԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Գործը վաղվան մնաց, իմացի կորավ գնաց:
- Գործը փառավոր, փառքը թեւավոր:
- Գորտի երեսին թքեցին, ասաց անձրեւ է գալիս:
- Դառնություն չճաշակած, քաղցրության արժեքը չես հասկանա:
- Դարդ կա՝ կգա կանցնի, դարդ կա՝ կայրի կանցնի:
- Դարմանը քոնը չէ, դարմանցը հո քոնն է:
- Դուրսը քահանա, ներսը սաստանա:
- Դեւին դժոխք ցույց չտաս, արքայուշյան ճանապարհը չի իմանա:
- Եզան տակին հողթ են փնտրում:
- Եզը պղզերով են ուտում, ուրիշին են գող անվանում:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- «Հավվա, հավվա» ասելով բերանդ չի հավվայտովի:
- Համբերությունը դառն է, պտուղները քաղցր են:
- Համերաշխությամբ աշխարհն էլ կնվաճես:
- Հաջին հաջուն Մեքքայում կտեսնի:
- Հավատարմությունը շնից պետք է սովորել:
- Հարյուր անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:
- Հարյուր կուժ է շինում, ոչ մեկին ունկ չի դնում:
- Հարսը պարել չգիտեր, ասաց հատակը հարթ չէ:
- Հարստությունը մարդ չի ստեղծում, մարդն է հարստություն ստեղծում:
- Հարցնելով, հարցնելով, մինչև Զնդկաստան կզնաս:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ՎԱԽՆԵՆՈՒՄ ԵՆ ՊԱՐԱՆԸ ԿՏՐՎԻ

- Վարդուհի՛, - հարեանուհուն է դիմում Աշոտիկի մայրը,- դույլը պարանից պոկվեց, մնաց ջրիտրի մեջ, Վարդանիկին ուղարկիր, կախե՞ք ցած դույլը հանի:
- Ընչի՞ Աշոտիկին չե՞ք կախում:
- Վախենում են պարանը կտրվի, ընկնի ջուրը:

ԱՌԱՋ ԱՆՑԻՐ

- Մոռանալով բանաստեղծության տողերը, Վարդանիկը մի բանի անգամ կրկնում է.
- Ես կանգնած եմ ծառի կատարին...
- Առաջ անցիր,- գայրանում է ուսուցիչը:
- Ցած կընկնեմ,- պատասխանում է Վարդանիկը:

ԵՐԿՈՒՄ ԷՆ ՉՈ՞ՒԿ

- Վարդանիկ, մի գոյական անուն ասա:
- Չուկ:
- Մի հատ էլ ասա:
- Չուկ:
- Երկուսն էլ ձո՞ւկ:
- Ընկեր Մարգո, մեկը իշխան է, մյուսը՝ ալապալաղ:

ՔԻՉ ԷՆ ՀԱՄԲԵՐԻ

- Վարդանիկ, արդեն ամուսնացար, մինչև ե՞րբ մատեն ուսերիս,- հարցրեց հայրը:
- Քիչ էլ համբերի, հայրիկ, շուտով կտեղավորվեմ աներոջս ուսերին:

ԵՍ ՄԵՂՎՈՐ ՉԵՄ

- Դարձյալ թվաբանությունից երկուս ես ստացել,- դժգոհեց մայրը:
- Ես մեղավոր չեմ, ընկեր Մարգոն նշանակեց:
- Իսկ ե՞րբ ես ուղղելու:
- Ընկեր Մարգոն մատյանը միշտ քովը կպահե, ինչը՞ղ ուղղեմ:

2- Արդյոք գիտե՞ք

Կլպած գետնախնձորը եփելիս աղ են անում սկզբից, որպեսզի հանքային աղերի կորուստները թիչ լինեն:

գետնախնձորը արագ կեփի, եթե ջրի մեջ լցնեք մի գդալ մարգարին:

Տապակած գետնախնձորը համով կը լինի, եթե տապակելուց առաջ մի բանի րուպե նրան լցնեք տաք ջրի մեջ, թողնեք չորանա եւ հետո լցնեք ուժեղ տաքացված տապակի (թավա)մեջ:

3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1- Բերան չունի՝ փչում է, Մտրակ չունի՝ շաչում է, Չեռքեր չունի՝ հրում է, Բեռնակիր չէ՝ կրում է,

Ոչ տուն ունի, ոչ էլ տեր, Շրջում է նա ամեն տեղ:

2- Ամենքի հետ սկսվում է, Ամենքի հետ՝ ավարտվում: Ամենքի հետ ավարտվելով՝ Երբեք էլ չի ընդհատվում:

3- Մեկի համար անցավ, Մեկի համար եկավ, Մեկի համար՝ կարծիլի, Մեկի համար՝ երկար:

4- Այն ի՞նչ քույր ու եղբայրներ են՝ Հետեւելով մեկմեկու, Գալիս-անցնում հաջորդաբար եվ նույն չորս երգն են երգում:

5- Յոթ եղբայր են՝ իրար նման, Թե դենքով, թե տարիքով. Չեն հանդիպել մինչև հիմա՝ Ամցնելով նույն ճամփեքով:

Պատասխան. 1-Քնի 2- Ժամանակ 3- Ժամանակ 4-Տարվա չորս եղանակները 5- Շաբաթվա օրերը

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Քնելուց առաջ շոգեհարել ոտքը եւ ապա կոշտուկի վրա դնել լիմոնի կեղեւ՝ միջուկով ու կապել: Երկու-երեք օր անընդհատ կիրառել այս բուժամիջոցը, որից հետո շոգեհարելով ոտքը՝ զգույշ քերել կոշտուկը:

Հաճախ է պատահում, երբ ոտքի բթամատի եղունգը ներաճում է մարմնի մեջ: Այդ երեւույթը տանջալից ցավ է պատճառում: Վերոհիշյալից խուսափելու համար խորհուրդ է տրվում քնելուց առաջ հիվանդ մատին ամրացնել կարագով լցված «մատոնց» (նապալեչնիկ), վրան հազնել կիսագուլպա եւ թողնել մինչև առավոտ: Այս բուժամիջոցը կրկնել 2 - 3 շաբաթ՝ անընդմեջ: Ցավը հանդարտելուց հետո զգուշորեն բարձրացնել եղունգի ծայրը եւ տակը դնել մառլայի փոքրիկ կտոր:

Եղունգի ներաճը մարմնի մեջ դադարեցնելու համար եղունգարմատից մինչև ծայրը խարտոցով ոչ շատ խորը ակոստներ բացել: Մի բանի օր անց ցավը կդադարի եւ եղունգը կընդունի իր նորմալ դիրքը: Հետագայում եղունգները կտրելիս՝ անկյուններին ձեռք չտալ:

Քրտնելու դեպքում առավոտյան ոտքերին շաղ տալ բորաթթվի փոշի եւ ապա թեթեակի թափ տալուց հետո, հազնել գուլպաները: Երեկոյան տաք ջրով լվանալ ոտքերը: Ջրի ջերմությունը չպետք է գերազանցի 40-50 աստիճանին: Այս բուժամիջոցից 2-3 շաբաթ անց ոտքերը այլևս չեն քրտնի:

ՈՒժեղ քրտնելու դեպքում ոտքերին շաղ տալ կաղնու մանրացված կեղեւափոշի եւ քնել՝ գուլպաներով: Առավոտյան ոտքերը լվանալ սառը ջրով: